Իրավունքների Պաշտպանություն Առանց Սահմանների
Հասարակական Կազմակերպություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Նարեկ Մկրտչյանին

Հարգելի պարոն Մկրտչյան,

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը Արցախից բռնի տեղահանված անձանց տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն: Մեր աշխատանքի ընթացքում արձանագրել ենք կրկնվող և համակարգային խնդիրներ, որոնք առնչվում են ՀՀ կառավարության 12.10.2023թ. թիվ 1763-Լ որոշմամբ նախատեսված սոցիալական աջակցության տրամադրմանը. մասնավորապես ի հայտ են եկել Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) կողմից վերը նշված որոշման դրույթների ձևական և երեխայի շահերին հակասող մեկնաբանություններ և ըստ այդմ՝ վերջիններիս իրավունքների սահմանափակումներ հետևյալ դեպքերում.

ա) Ամուսնալուծված/ առանձին բնակվող ծնողների երեխաները զրկվում են աջակցությունից կամ ստանում են այն մասնակիորեն, եթե երեխայի հետ փաստացի չբնակվող ծնողը ՀՀ-ում ունի սեփականության իրավունքով բնակարան/բաժնեմաս:

Այսպես, ՄՍԾ-ն, հիմք ընդունելով Որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 6-րդ ենթակետը[1], որպես շահառու չի դիտարկում այն անձանց, որոնց «ընտանիքի անդամները (ամուսին, մինչև 18 տարեկան երեխայի ծնող)» ՀՀ-ում ունեն բնակելի անշարժ գույք: Այս նորմի ձևական կիրառման արդյունքում, ամուսնալուծված կամ առանձին բնակվող ծնողների երեխաները զրկվում են աջակցությունից, եթե իրենց խնամքն ու կեցությունն իրականացնող ծնողի հետ չբնակվող մյուս ծնողն ունի սեփականություն:

---

[1] 1. Սույն միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառու հանդիսացող և 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո տեղահանված և 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց (այսուհետ՝ շահառուներ), բացառությամբ՝ …6) Հայաստանի Հանրապետությունում սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունքով իրեն կամ իր ընտանիքի անդամներին (ամուսին, մինչև 18 տարեկան երեխայի ծնող) պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունեցող անձանց, բացառությամբ երբ տվյալ անձը՝

ա. Հայաստանի Հանրապետությունում ունի բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված միայն մեկ անշարժ գույք, որի բաժնեմասին (ընդհանուր համատեղ սեփականության դեպքում համասեփականատերերի բաժնեմասերը դիտարկվում են հավասար չափերով) համապատասխան մակերեսը փոքր է 20 քառակուսի մետրից,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշման շրջանակներում բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման կամ անհատական բնակելի տան կառուցման հավաստագիրն իրացրած անձ է:

Այս մոտեցումը խնդրահարույց է, քանի որ.

- Այն անտեսում է Որոշման նպատակը՝ աջակցել կեցության և այլ ծախսերը հոգալուն: Երեխայի հետ փաստացի չբնակվող ծնողի գույքը չի ծառայում երեխայի կեցության կարիքների բավարարմանը:
- Այն հակասում է Որոշման N 1 հավելվածի 2.1 կետի տրամաբանությանը[2], որը երեխայի շահառու լինելը կապում է դիմումը ներկայացրած ծնողի կամ խնամակալի կարգավիճակի հետ,
- Այն չի կիրառվում կարիքահեն, չի իրականացվում երեխայի կեցության պայմանների ստուգման արդյունքում:

բ) Երեխաները զրկվում են աջակցությունից, եթե ծնողներից մեկը, որի դիմումիմ երեխան կցված է, ժամանակավորապես բացակայում է ՀՀ-ից, անկախ այն հանգամանքից, որ երեխաները շարունակում են բնակվել Հայաստանում և շարունակում ունենալ աջակցության կարիք:

ՄՄԾ-ն, հիմք ընդունելով Որոշման N 2 հավելվածի 20-րդ կետի 2-րդ ենթակետը[3], մերժում է աջակցությունն այն անձի մասով, ով չի գտնվում ՀՀ-ում: Սակայն այս նորմը ինքնաբերաբար կիրառվում է նաև երեխայի (երեխաների) նկատմամբ, եթե դիմում ներկայացրած ծնողը ժամանակավորապես բացակայում է, անգամ եթե երեխան շարունակում է բնակվել ՀՀ-ում՝ մյուս ծնողի կամ այլ հարազատի խնամքի ներքո՝ բնակարանի վարձակալության պայմաններում: Սա անտեսում է այն հանգամանքը, որ աջակցության իրական շահառուն երեխան է, ում կեցության վայրը և կարիքները չեն փոխվել:

Համակարգը թույլ չի տալիս ծնողին կատարել փոփոխություն:

Այն դեպքերում, երբ ՀՀ-ից մեկնելուց առաջ ծնողը մոտեցել է ՄՄԾ՝ երեխաներին մյուս ծնողին կցելու նպատակով, նշված գործողությունը հնարավոր չի եղել կատարել նաև աշխատակիցների կողմից:

Արդյունքում երեխաները մի քանի ամիս չեն օգտվել ծրագրի աջակցությունից, դրանով իսկ ընտանիքը հայտնվել է չափազանց խոցելի վիճակում, այդ թվում՝ բնակարանի և երեխայի կեցության այլ ծախսերը հոգալ չկարողանալով:

Համակարգի տեխնիկական սահմանափակումների պատճառով շահառուն, հատկապես անչափահաս շահառուն չպետք է զրկվի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աջակցությունից:

Երեխայի լավագույն շահի գերակայությունը ամրագրված է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ:

---

2 Մինչև 18 տարեկան երեխան սույն միջոցառման շահառու է, եթե նրան դրամական աջակցություն նշանակելու դիմումը ներկայացրած ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն հանդիսանում է միջոցառման շահառու:
3 Դիմումը մերժվում է՝ …2) այն անձի մասով, ով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ չի գտնվում Հայաստանի Հանրապետությունում:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Ավելին՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը երաշխավորում է, որ մասնակից պետությունները հարգում և ապահովում են Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար, առանց որևէ խտրականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից: Այսինքն՝ ծնողներից մեկի ՀՀ-ից բացակայությունը չպետք էինքնաշխատ եղանակով երեխայի զրկի օրենսդրությամբ նախատեսված աջակցությունից, հակառակ դեպքում նման մոտեցումը կհանդիսանա խտրականություն: Հատկապես որ այն գոյացել է Կառավարության կողմից ներդված առցանց համակարգի սահմանափակումների պատճառով:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանվում է պետության պարտավորությունը հնարավոր առավելագույն չափով ապահովել երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը: Իսկ կիրառվող մոտեցումը հակասում է այս պարտավորությանը: Ճանաչելով յուրաքանչյուր երեխայի՝ իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը՝ ՀՀ կառավարությունը նախատեսել և տրամադրումէ աջակցություն յուրաքանչյուր տեղահանված անձի համար, այդ թվում՝ երեխաների: Մյուս կողմից՝ զրկում է այդ աջակցությունից փաստացի կարիք ունեցող երեխաներին ձևական և ոչ կարիքահեն մոտեցում ցուցաբերելով:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը և ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը ևս ամրագրում են այս սկզբունքի գերակայությունը:

Փախստականների և ապաստանի մասին ՀՀ օրենքը հատուկ ճանաչում է անչափահաս երեխաների խոցելիությունը և հատուկ կարիքները:

Օրենքի 23-րդ հոդվածը երաշխավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստան ստացած փախստականներին, այդ թվում՝ երեխաներին պետական նպաստներ և դրամական այլ օգնություններ ստանալու իրավունքը: Նշված իրավունքը չի սահմանափակվում ծնողներից մեկի ՀՀ-ում գտնվելու փաստով:

Մարգարիտ Հովհաննիսյանի վերաբերյալ 01.04.2011թ. թիվ ԵԱԴԴ/1513/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ:

Փաստացի, ՄՄԾ-ն վերը նշված իրավիճակներում անտեսում է երեխայի իրական կենսական պայմանները և շահերը: Երեխայի՝ սոցիալական աջակցություն ստանալու իրավունքը պայմանավորվում է մի գործոնով (օրինակ՝ նրա հետ չբնակվող ծնողի գույքային վիճակով կամ երկրում չգտնվելով), որն ուղղակիորեն չի առնչվում տվյալ պահին երեխայի կարիքներին և փաստացի կարգավիճակին:

Վարչական մարմինը հաշվի չի առնում, որ երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացվում է առանձին ապրող մոր (կամ հոր) կողմից՝ առանձին տնտեսության շրջանակներում, և մյուս ծնողի անշարժ գույքը որևէ կերպ չի ծառայում այդ երեխաների կեցության կարիքների բավարարմանը:

Այս մոտեցումը ոչ միայն հակասում է վերոնշյալ իրավական նորմերին, այլև ստիպում է առանց այդ էլ խոցելի վիճակում գտնվող ընտանիքներին դիմել դատական պաշտպանության՝ կրելով ժամանակային, ֆինանսական բեռ, ինչն ինքնին հակասում է երեխայի շահին:

Այսպես, օրինակ, թիվ ՎԴ/6598/05/23 վարչական գործով, որով հայցվորի մայրը Դատարանին ներկայացրել է, որ Իրենք հանդիսանում են Լեռնային Ղարաբաղից տեղահանված և ՀՀ կառավարության N 1763-Լ որոշման շահառու, իսկ 2024թ. սեպտեմբերից իր դստեր համար նախատեսված 50,000 դրամ աջակցությունից վճարվել է միայն 10,000 դրամը այն հիմքով, որ երեխայի հայրը, որի հետ հայցվորն ամուսնալուծված է 2015 թվականից, Երևանում սեփականության իրավունքով բնակարան է ձեռք բերել, Դատարանը 12.06.2025թ.-ին կայացված վճռով գտել է, որ ՄՄԾ-ն սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ կառավարության N 1763-Լ որոշման դրույթները: Մանավորապես՝ ըստ Դատարանի՝ աջակցությունը դադարեցնելու պահին (սեպտեմբեր 2024թ.) գործող խմբագրությամբ՝ նշված որոշումը չի նախատեսել աջակցության սահմանափակում այն դեպքում, երբ ամուսնալուծված ծնողը գույք է ձեռք բերում: Դրույթը վերաբերում էր շահառուին, նրա ամուսնուն կամ անչափահաս երեխային պատկանող գույքին: Այն նորմը, որը սահմանափակում է աջակցությունը՝ հիմքում դնելով «մինչև 18 տարեկան երեխայի ծնողի» գույքը, ուժի մեջ է մտել միայն 2024թ. նոյեմբերի 21-ին: Դատարանը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը, նշելով, որ անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Հետևաբար, ՄՄԾ-ն չէր կարող սեպտեմբերին կիրառել մի նորմ, որն ընդունվելու էր միայն նոյեմբերին:

Ավելին, Դատարանը անդրադարձել է նաև Ընտանեկան օրենսգրքի նորմերին, որոնք վկայակոչված են եղել կոնկրետ գործով Պատասխանողի կողմից՝ որպես աջակցություն տրամադրելը մերժելու հիմնավորումներ. մասնավորապես գտել է. որ ներկա պահին սոցիալական աջակցություն տրամադրել-չտրամադրելու հարցում որևէ նշանակություն չի կարող ունենալ ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված այն նորմը, համաձայն որի՝ երեխան ընդհանրապես ունի ինչ-որ տարածությունում բնակվելու կամ հետագայում ժառանգություն ստանալու իրավունք: Նախ վարչական մարմինը չի կարող ենթադրել, իմանալ, գուշակել երեխայի ծնողը մինչև ժառանգություն թողնելու պահը իրեն միանձնյա պատկանող գույքը կվաճառի թե ոչ, կտակ կթողնի այլ անձին թե ոչ (եթե արդեն իսկ չի կտակել այն այլ

անձի՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ վերջինս ունի նոր ընտանիք), հետևաբար, այս պահին սոցիալական աջակցության կարիք ունեցող երեխային օգնությունից զրկելու հիմքում դնել այն, որ միգուցե 10, 20, 40, 50 տարի անց նա կարող է լինել ինչ-որ գույքի ժառանգ, Դատարանի գնահատմամբ անթույլատրելի է և չի բխում երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ սահմանված երեխայի լավագույն շահից, ինչպես նաև օրենքի նպատակներից և սկզբունքներից:

Ըստ Դատարանի՝ Պատասխանողի կողմից վկայակոչվող մեկ այլ՝ Որոշմամբ հաստատված հավելված 2-ի 22-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն (որը հատուկ շեշտադրում է Պատասխանողը)՝ սույն միջոցառման շրջանակներում ամսական դրամական աջակցությունը վճարվում է Հայաստանի Հանրապետությունում սեփականության (համաձայն սույն որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 1-ին և 1.1-ին ենթակետերի) իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունեցող շահառուին և նրա ընտանիքի անդամներին (ամուսին, անչափահաս երեխա)՝ 10000 դրամի չափով:

Նշված նորմում խոսքը գնում է այն դեպքերի մասին, երբ ծրագրի շահառուի ամուսինը և/կամ անչափահաս երեխան ունեն սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակվելու համար նախատեսված գույք: Մինչդեռ սույն դեպքում Որոշմամբ ծրագրի շահառու է հանդիսանում անչափահաս երեխան (հավելված 1-ի 3-րդ կետ): Անչափահաս երեխան բնականաբար ամուսին չունի, ինչպես նաև չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք (հակառակը հավաստող ապացույց գործում առկա չէ), իսկ ապագայում հնարավոր ժառանգության դեպքում հնարավոր սեփականատեր դառնալը չի կարող գնահատվել, որ այս պահին վերջինս արդեն իսկ ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք և ըստ այդմ իրավունք չունի ստանալ 50.000 ՀՀ դրամի չափով սոցիալական աջակցություն: Բացի այդ, անգամ եթե Պատասխանողը որպես ծրագրի շահառու դիտարկում է անչափահաս երեխայի մորը, ապա հարկ է նշել, որ երեխայի մայրը չունի ամուսին, ինչպես արդեն իսկ նշվեց, վարչական գործում առկա ապացույցի համաձայն ամուսիններն ամուսնալուծվել են դեռևս 15.10.2015թ. և առկա չէ որևէ ապացույց նոր ամուսնության վերաբերյալ, իսկ իր անչափահաս երեխան չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք:

Ուստի Դատարանը վճռով գտել է, որ հայցը ենթակա է բավարարման[4]:

Փաստացի նշված խնդրից տուժած անձանց մի մասը դիմել է դատարան՝ իրենց շահերի պաշտպանության նպատակով, մի ուրիշ մասը՝ վերադաս բողոքներ և դիմում-խնդրանքներ է ուղղել Միասնական սոցիալական ծառայությանը կամ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, իսկ մի մասը որևէ պաշտպանության միջոցի ձեռնամուխ չի եղել՝ ռեսուրսների բացակայության կամ իրենց իրավունքների պաշտպանության մասին իրազեկված չլինելու, ուշ իրազեկվելու կամ ժամկետները բաց թողնելու պատճառով:

---

[4] *դատական գործի հղումը՝ https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071810012710*

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը հնարավորություն է տալիս վարչական մարմնին՝ դիմումի հիման վրա վերսկսելու բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը:

Միևնույն ժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածը սահմանում է դատարանի լիազորությունը՝ կարճել գործի վարույթը, եթե վեճն ըստ էության սպառված է:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունը և դատական պրակտիկան, Հաշվի առնելով խնդրի համակարգային բնույթը, տուժած քաղաքացիների տարբեր խմբերի առկայությունը (դատարան դիմած, վարչական բողոք ներկայացրած կամ իրավունքների պաշտպանությանն ընդհանրապես չդիմած) և առաջնորդվելով վարչական ու դատական ռեսուրսների խնայողության, ինչպես նաև երեխաների կարիքների արագ բավարարման նպատակով՝ առաջարկում ենք.

Ա) Դատական վարույթում գտնվող գործերով.

Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածը՝ կամավոր կատարել հայցապահանջները՝ փոխհատուցելով երեխաների համար ՀՀ կառավարության 12.10.2023թ. թիվ 1763-Լ որոշմամբ սահմանված, սակայն չվճարված սոցիալական աջակցությունն այն դեպքերում, երբ

- կա՛մ Որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 6-րդ ենթակետը կիրառելու արդյունքում, աջակցությունը դադարեցվել կամ կրճատվել է բացառապես այն պատճառաբանությամբ, որ նրանցից առանձին բնակվող կամ ամուսնալուծված ծնողը ՀՀ-ում ունեցել է անշարժ գույք։
- կա՛մ Որոշման N 2 հավելվածի 20-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառման արդյունքում, դադարեցվել կամ կրճատվել է բացառապես այն պատճառաբանությամբ, որ ծնողը ժամանակավոր բացակայել է ՀՀ-ից, սակայն երեխան շարունակել է բնակվել ՀՀ-ում:

Բ) Վարչական բողոքարկման փուլում գտնվող գործերով.

Վերանայել և անվավեր ճանաչել սխալ մեկնաբանության հիման վրա կայացված վարչական ակտերը՝ բավարարելով երեխաներին աջակցություն տրամադրելու դիմումները՝ ցուցաբերելով առավել անհատական մոտեցում և վճարելով վերջիններիս ամբողջ ժամանակահատվածի համար կուտակված գումարները:

Գ) Այն դեպքերով, որոնցով վարույթներն ավարտված են և անձինք սահմանված ժամկետում չեն ներկայացրել ո՛չ վերադասության, ո՛չ դատական կարգով, սակայն միևնույն է զրկվել են ՀՀ կառավարության 12.10.2023թ. թիվ 1763-Լ որոշմամբ սահմանված աջակցությունից ամբողջ ծավալով օգտվելու հնարավորությունից,

ստեղծել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկը, որը հիմք ընդունելով, անձինք հնարավորություն կունենան դիմելու՝ իրենց նկատմամբ իրականացված վարույթները վերսկսելու և իրենց օգտին վարչական ակտ կայացվելու նպատակով: Այն է, ընդունելի որևէ եղանակով հաստատել, որ այն երեխաները, ում ծնողը մեկնել է ՀՀ-ից, սակայն իրենք շարունակում են բնակվել ՀՀ-ում, շարունակում են հանդիսանալ ՀՀ կառավարության 12.10.2023թ. թիվ 1763-Լ որոշման լիարժեք շահառու: Հաստատել նաև, որ այն երեխաները, ում ծնողներից մեկը, որի հետ վերջիններս չեն վարում ընդհանուր տնտեսություն, չեն բնակվում համատեղ, ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, միևնույն է, շարունակում են հանդիսանալ ՀՀ կառավարության 12.10.2023թ. թիվ 1763-Լ որոշման լիարժեք շահառուներ:

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

Սույն դիմումին միանում են նաև հետևյալ կազմակերպությունները՝

«Արցախի մայրիկների աջակցման կենտրոն»
«Արցախի Թեքեյան մշակութային միություն» ՀԿ